Ո՛չ կապարով թունավորումներին



ԱՎՀՀԵ

Երևան 2023

Կապարով շրջակա միջավայրի աղտոտման աղբյուրները

Շրջակա միջավայրի աղտոտման կարևոր աղբյուրներն են կապարի արդյունահանումը, ձուլումը, օգտագործումն արդյունաբերական արտադրությունում, վերամշակումը, ինչպես նաև օգտագործումն ապրանքների լայն տեսականիում:

Կապարն օգտագործվում է բազմաթիվ արտադրություններում, այդ թվում՝ մեքենաների և էներգիայի պահեստավորման այլ սարքերի համար կապարաթթվային մարտկոցների, գունանյութերի և ներկերի, զոդման, զինամթերքի, կերամիկական ջնարակների, զարդերի, վիտրաժի, կապարե բյուրեղյա սպասքի, խաղալիքների և որոշ կոսմետիկական միջոցների, ինչպես նաև Հնդկաստանում, Մեքսիկայում, Վիետնամում և այլ երկրներում արտադրվող ավանդական դեղամիջոցների արտադրությունում:

Կապարի համաշխարհային սպառման ավելի քան երեք քառորդը բաժին է ընկնում ավտոմոբիլների համար կապարաթթվային մարտկոցների արտադրությանը:

Կապարի համատարած օգտագործումն աշխարհի շատ մասերում դարձել է շրջակա միջավայրի աղտոտման, իսկ մարդու օրգանիզմում՝ կուտակման պատճառ՝ հանգեցնելով հանրային առողջապահական զգալի խնդիրների:

Հաշվի առնելով կապարի ազդեցության անդառնալի հետևանքները, Առողջապահության համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի համատեղ ղեկավարությամբ և «Աղտոտիչների վերացման միջազգային ցանց»-ի (IPEN) ակտիվ մասնակցությամբ 2011թ.-ին ստեղծվել է «Կապարային ներկերի վերացման գլոբալ դաշինք»-ը: «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ն, լինելով IPEN-ի անդամ, ամեն տարի մասնակցում է Գլոբալ դաշինքի նախաձեռնությամբ իրականացվող «Կապարով թունավորումների կանխարգելման միջազգային շաբաթ»-ին:

Անհերքելի փաստեր մարդու օրգանիզմի վրա կապարի ազդեցության մասին

• Կապարը թունավոր նյութ է, որի կուտակումն օրգանիզմում ազդում է մի շարք օրգան-համակարգերի վրա: Այն հատկապես վնասակար է փոքր տարիքի երեխաների համար:
• Օրգանիզմում կապարը կուտակվում է ուղեղում, լյարդում, երիկամներում, ոսկրերում, նաև ատամներում:
Մարդու օրգանիզմի վրա կապարի ազդեցության ախտորոշումը և բուժումը հիմնված են արյան մեջ կապարի քանակի վրա:
• Կապարը մեծահասակների մոտ հանգեցնում է արյան ճնշման երկարաժամկետ բարձրացման, ինֆարկտի, ինսուլտի և երիկամային անբավարարության:
• Կապարի ազդեցությունն առաջացնում է նաև անեմիա, իմունային տոքսիկոզ և վերարտադրողական համակարգի գործառույթի խանգարում:
• Կապարը քաղցկեղածին է:
• Կապարը համարվում է էնդոկրին համակարգի քայքայիչ:

Կապարի վնասակար ազդեցությունը երեխաների վրա

Ոսկրերում կուտակված կապարը հղիության ընթացքում մտնում է արյան մեջ և ազդում զարգացող պտղի վրա: Հղի կանանց մոտ կապարի բարձր քանակները կարող են դառնալ վիժումների, մահացած ծնունդների, վաղաժամ ծնունդների և ծնվելու պահին նորածնի ցածր քաշի պատճառ:

Կապարի թունավոր ազդեցության նկատմամբ հատկապես խոցելի են փոքր տարիքի երեխաները, քանի որ նրանց նյարդային համակարգը գտնվում է ձևավորման փուլում:

Կապարի քիչ քանակները, որոնք չեն առաջացնում որևէ ակնհայտ ախտանիշ, կարող են ազդել երեխաների ուղեղի զարգացման վրա և հանգեցնել մտավոր զարգացման գործակցի (IQ) նվազման, վարքագծային փոփոխությունների, ինչպիսիք են ուշադրության շեղումը, ուշադրության կենտրոնացման



ժամանակահատվածի կրճատումը, հակասոցիալական վարքագծի դրսևորումը և ուսման վատ արդյունքները:

Թերսնված երեխաներն ավելի են հակված կապարի ազդեցությանը, քանի որ նրանց օրգանիզմը կալցիումի կամ երկաթի պակասի դեպքում ավելի շատ կապար է յուրացնում:

Արյան մեջ կապարի «անվտանգ» մակարդակ չկա:

Կապարի ազդեցությունը կանխարգելելի է:

2021թ.-ի հուլիսի դրությամբ մեքենաների և բեռնատարների համար նախատեսված կապար պարունակող էթիլացված բենզինը չի վաճառվում աշխարհի ոչ մի երկրում:

2022թ.-ի հունիսի 30-ի դրությամբ երկրների 45%-ը հաստատել է, որ ունեն իրավական սահմանափակումներ և օրինական պարտադիր վերահսկողություն կապարային ներկերի արտադրության, ներմուծման, վաճառքի և օգտագործման նկատմամբ:

Կապարային ներկերի հետազոտությունը Հայաստանում

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից նմուշառված ներկերում կապարի պարունակության նկատմամբ իրականացված հետազոտության արդյունքում պարզվել է, որ դրանց 59 %-ում կապարի պարունակությունը գերազանցում է միջազգային չափորոշիչը՝ 90 մգ/կգ (ppm):

Հարկ է նշել նաև, որ ՀՀ-ում ներկերում կապարի պարունակության չափորոշիչը, որը սահմանված է կենցաղային քիմիայի ապրանքներին և լաքաներկերին ներկայացվող սանիտարահամաճարակաբանական և հիգիենիկ պահանջներով

(ՀՀ առողջապահության նախարարի 2014թ.-ի սեպտեմբերի 11-ի թիվ 59-Ն հրաման), 56 անգամ գերազանցում է միջազգային չափորոշիչը:

Ներկա դրությամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի սանիտարական, բուսասանիտարական և անասնաբուժական միջոցառումների վարչության կողմից կապարի պարունակության չափորոշչի վերանայման գործընթացը գտնվում է ներպետական համաձայնեցման փուլում:

Հայաստանում կապարի բարձր պարունակությամբ ներկերից մի քանիսը

Կապարի թունավոր ազդեցությունները



Ուղեղի և նյարդերի ախտահարում

Խոսքային, լեզվական և վարքագծային խնդիրներ

Անեմիա

Աճի նվազում

Վերարտադրողական խնդիրներ

Մտավոր ունակությունների նվազում և սովորելու դժվարություններ

Լսողության խնդիրներ

Արյան բարձր ճնշում

Երիկամների ախտահարում

Մարսողության խնդիրներ

World Health Organization

Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Քիմիական կոնվենցիաների շրջանակում քարոզարշավի իրականացում» ծրագրի շրջանակում:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ
ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2
Հեռ.՝ (+374 10) 52 36 04
Էլ.փոստ՝ officeawhhe@awhhe.am
Վեբ կայք՝ http://www.awhhe.am